ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6. 1959 Общественные науки

Հ. Ս. Սարգսյան

# ՌՈՒՍ-ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*1905 թ. առաջին ռուսական ռևոլյուցիան, Վ. Լենինի արտահայտությամբ, միջնադարյան անշարժության մեջ վայրենացած բնակչության հարյուր միլիոններին արթնացրեց նոր կյանքի, նոր պայքարի։ Պատահական չէ, որ ռևոլյուցիայի մրրկահավ Գորկին արաբ դեմոկրատական ինտելիգենցիայի սիրելի գրողն է դառնում։ Գորկու պատմվածքների առաջին թարգմանիչն է հանդիսանում Սելիմ Կոբեյնը, որը 1907 թ. Կահիրեում հրատարակում է Գորկու պատմվածքների մի փոքր ժողովածու։ Նախաբանում Կոբեյնը ընդգծում է Գորկու դերը որպես ռուսական ռևոլյուցիայի ավետաբերի և նրա պատմվածքների նշանակությունը Արևելքի ժողովուրդների համար։ «Մաքսիմ Գորկին,— գրում է նա,— Ռուսաստանում հայտնվեց այն ժամանակ, երբ ... ռուսական երկիրը ներքին և արտաքին գործերում ծայր աստիճան քայքայման հասավ։ Գրողը պայքարի հրապարակ ելավ իր հայրենիքին և իր հայրենակիցներին ծառայելու համար»[1]։*

*Սիրիայի մանկավարժ Անթուն Բալլանը, որը սովորել էր Ռուսաստանում, 1906 թ. իր հրատարակած պատմվածքների ժողովածուում տեղավորվում է Գորկու «Ծերուկը», «Մայրը», «Խոստովանություն» և այլ պատմվածքները։ Գորկու առաջին թարգմանիչներ՝ Սելիմ Կոբեյնը և Անթուն Բալլանը ընդգծել են Գորկու ստեղծագործության ռևոլյուցիոն նշանակությունը։ Մաքսիմ Գորկու վերադարձը Սովետական Միություն 1928 թ. լայն արձագանք է գտնում արաբական մամուլում։*

*Դամասկոսում հրատարակվող (1935) գրական-գիտական «Աթթալիա» (Ավանգարդ) ամսագիրը նույնպես խոշոր աշխատանք է տարել Գորկու պատմվածքները ժողովրդականացնելու ուղղությամբ։ Մ. Գորկու մահից հետո ամսագրի հատուկ համար է լույս տեսնում նվիրված Գորկուն, որտեղ տպագրվում է նրա կենսագրությունը և մի հոդված՝ նվիրված այն պայքարին, որ մղել է Գորկին սոցիալիզմի համար։*

*Սովետական Միության և Լիբանանի միջև կուլտուրական կապերի Լիբանանի ընկերությունը 1958 թ. ապրիլի 2-ին Բեյրութում հանդիսավոր միտինգ է կազմակերպել նվիրված Մ. Գորկու ծննդյան իննսուներորդ տարեդարձի հիշատակին։ Հասարակական գործիչներ և գրողներ՝ դոկտոր Ջորջ Հանանն, Միխայիլ Նուայմեն, և ուրիշներ, իրենց ելույթներում մանրամասնորեն խոսել են Գորկու կենսագրության և նրա գրական-ռևոլյուցիոն գործունեության մասին։*

*«Աթ-թարիկ» գրական ամսագրի նույն թվի ապրիլի համարում Միշել Սուլեյմանը «Մաքսիմ Գորկին —ռեալիզմի հայրը սոցիալիստական գրականության մեջ» վերնագրով հոդվածում խոսում է գրողի կենսագրության և նրա*

---

[1] „Известия Академии наук СССР", Отд. лит. и языка, 1940, № 1, стр. 92.

գրական-ռևոլյուցիոն գործունեության մասին, ընդգծում նրա դերը հատկապես 1905 թ. ռևոլյուցիայի ժամանակաշրջանում, երբ նա սկսեց գրել իր նշանավոր պատմվածքը, «Մայրը», որը մեծ դեր խաղաց բանվոր դասակարգի ազատության համար մղվող պայքարում[2]։ Հոդվածագիրը նշում է Գորկուն, որպես սոցիալիստական գրականության մեջ ռեալիզմի հիմնադիրներից մեկի։

«Ռուս-պաղեստինյան ընկերության» դպրոցները, որոնք մեծ դեր խաղացին արաբական երկրներում ռուսաց լեզվի և գրականության տարածման գործում, 1914—1918 թթ. համաշխարհային պատերազմի սկզբներին դադարեցրին իրենց գործունեությունը։ Պատերազմի ժամանակաշրջանում ռուս գրականության մասին նյութերը այս երկրներում քաղվել են բացառապես արևմտաեվրոպական աղբյուրներից։ Սակայն դեպի ռուս գրականությունը եղած հետաքրքրությունը չի դադարել։

* * *

1958 թ. ապրիլին լրացավ խոշորագույն գրող և քննադատ, Սիրիայի և Լիբանանի հասարակական գործիչ, ազատագրական շարժման ակտիվ մասնակիցներից մեկի՝ Օմար Ֆախուրիի մահվան տասներեք տարին։

Օմար Ֆախուրին Սովետական Միության մեծ բարեկամն էր։ Նա 1942 թ. Բեյրութում հիմնել է «Աթ-Թարիկ» (Ուղի) կիսամյա ամսագիրը. նույն տարում կազմակերպել է նաև «Սովետական Միության Բարեկամների Լիբանանի Ընկերությունը»։ Սովետական Միության մասին իր առաջին հոդվածները Ֆախուրին տպագրել է «Աթ-Թարիկ» ամսագրում։ Այս հոդվածներից ամենալավագույնը «Սովետական Միությունը — նոր աշխարհի կառուցման հիմնաքարն է» հոդվածն է։ Այստեղ նա բարձր է գնահատել Սովետական Բանակի և Սովետական Միության ժողովուրդների հերոսական պայքարը հիտլերյան ռազմամոլների դեմ։ Նշելով ժողովուրդների հաղթանակը համաշխարհային երկրորդ պատերազմում Ֆախուրին ավելացնում է, թե պատերազմի սարսափներից ժողովուրդներին փրկելու երախտիքը պատկանում է Սովետական Միությանը, որի պատճառով էլ շատ ժողովուրդներ համակրանքով են լցված Սովետական Միության նկատմամբ։

«Աթ-Թարիկի» էջերում Ֆախուրին մերկացրել է ֆաշիստական պրոպագանդայի զրպարտություններն ու ստերը։ Նա խոր կերպով համոզված էր, որ իր երկրի ապագան կախված է պատերազմի ելքից և ֆաշիզմի դեմ մղվող ընդհանուր պայքարում իր ժողովրդի ակտիվ մասնակցությունից։ Հայրենական պատերազմի շրջանում գրված հոդվածներում Ֆախուրին հավատ է հայտնում, որ Սովետական Միությունը հետևողականորեն հանդես կգա խաղաղության պաշտպանի դերում։ Ֆախուրիի ծառայությունները մեծ են իր հայրենիքի անկախության համար մղված պայքարում, սովետական ու արաբական ժողովուրդների միջև բարեկամական ու կուլտուրական կապերի ամրացման գործում[4]։

---

[2] [illegible] 1958, ապրիլ։

[3] „Советское Востоковедение", 1956, № 3.

[4] „Интернациональная литература", 1942, № 12.

«Ալ-Թարիկ» ամսագրի 1944 թ. համարներից մեկում «Միխայիլ Շոլոխով» վերնագրով հոդվածում հաղորդվել են տվյալներ գրողի կյանքի ու գործունեության մասին, զետեղվել են «Խաղաղ Դոն» և «Հերկած Խոպան» վեպերի համառոտագրությունները։ «Շոլոխովը,— գրում է հոդվածագիրը,— գիտե ինչպես պատկերել Դոնի կոզակների բարքերը և հատկապես նրանց ապրելակերպը. նա ցույց է տալիս հնի և նորի միջև պայքարի ելևէջները»[5]։ Նույն ամսագրի էջերում տպագրվել են Իլյա Էրենբուրգի պատերազմի շրջանի պատմվածքները և այլ հոդվածներ Սովետական Միության մասին։

Հիշատակության արժանի են Լիբանանի առաջադիմական մի ուրիշ օրգանի՝ «Աս-սակաֆե Ալ-վաթանիյե» ամսագրում տպագրված հոդվածները։ Ամսագրի 1957 թ. համարում «Կրաչկովսկին և ժամանակակից արաբական գրականությունը» վերնագրով հոդվածում խոսվում է արաբական գրականության և արաբ գրողների կյանքի ու գործունեության գիտակ՝ սովետական ականավոր արաբագետ ակադեմիկ Կրաչկովսկու կատարած դերի մասին։ Ակադեմիկ Կրաչկովսկին իր ուսումնասիրությունների ընթացքում լուրջ ուշադրություն է դարձրել արաբական ազգային շարժման իդեոլոգիայի վրա. նա կանոնավոր կերպով ուսումնասիրել է արաբական գրողների ստեղծագործությունները՝ սկսած արար լուսավորիչների (XIX դ.) գործունեությունից և հատուկ ուշադրություն է նվիրել հետպատերազմյան շրջանի գրվածքներին (հեղինակներ՝ Թահա Հյուսեյն, Մահմուդ Թեյմուր, Ամին Ռեյհանի, Միխայիլ Նուայմե և ուրիշներ)։ Կրաչկովսկին անդրադարձել է ազատագրական գաղափարների արտացոլման խնդիրներին արաբական գրականության մեջ։ Վերոհիշյալ ամսագիրը այս առթիվ գրում է. «Իսկապես, արաբական ժողովուրդների ազատագրության հարցը, դա ժամանակակից արաբական գրականության առանցքն է կազմում և հայտնի է, որ այս հարցը արդեն մեծ տեղ է գրավել Կրաչկովսկու աշխատություններում»[6]։ Հոդվածագիրը նշում է Կրաչկովսկու ավանդը ռուս-արաբական գրական կապերի զարգացման, արաբ գրողներին և գրականությունը ռուս հասարակությանը ծանոթացնելու գործում։

* * *

Դաշիլմի դեմ մղած պայքարի և հաղթանակի արձագանքները իրենց արտացոլումը գտան նաև Իրաքի առաջադիմական մամուլում և գրականության մեջ։ Բաղդադի «Ալ-Ախբար» թերթի 1942 թ. համարներից մեկում տպագրվել է Իրաքի հայտնի բանաստեղծ Մուհամմետ ալ Ջավախիրիի «Սեվաստոպոլ» պոեմը, նվիրված հերոս քաղաքի պաշտպաններին, իսկ 1943 թ. Իրաքի թերթերում տպագրվել է նրա «Ստալինգրադ» մեծ պոեմը։

Այս երկու պոեմները 1949 թ. տպագրվել են Բաղդադում լույս տեսած հեղինակի բանաստեղծությունների ժողովածուում։ Իրաքում հրատարակված «Չորս պատմվածքներ համաշխարհային գրականությունից» ժողովածուում տպագրվել են Գոգոլի «Շինել»-ը, Տոլստոյի «Կորնեյ Վասիլիևը», Գորկու «Տափաստանում» և Կուպրինի «Ճահիճը» պատմվածքները։ Ժողովածուի նախա-

---

[5] الطريق, 1944, № 10, Բեյրութ։

[6] الثقافة الوطنية, 1957, № 6, Բեյրութ։

բանում «Շինել» պատմվածքը արդարացիորեն գնահատվում է որպես գեղարվեստորեն կատարյալ ստեղծագործություն։ Իրաքում հրատարակվել են նաև «Ստալինգրադը վրեժ է առնում» և Ստալինի «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» գրքերը։ 1946 թ. Գոգոլի «Շինել»-ը նորից է լույս տեսնում Բաղդադում։ Նույն թվականներին Բաղդադի թատրոնում եգիպտական շրջիկ թատրոնի կողմից բեմադրվում է «Ռևիզոր» կոմեդիան։ Անկասկած «Ռևիզոր»-ի թարգմանությունն ու բեմադրությունը հատկապես այս շրջանում, ինչպես նաև «Շինել»-ի նոր թարգմանության հրապարակ գալը կապված էր այն հետաքրքրության հետ, որ ունեին արաբական ժողովուրդները ռուս կլասիկ ու սովետական գրականության նկատմամբ։

1941 թ. Բաղդադում լույս տեսան Գորկու «Մայրը» և Պոլևոյի «Պատմվածք իսկական մարդու մասին» արաբերեն թարգմանությունները։ Վերջին տարիներս արաբական Արևելքում հաճախ են երևում սովետական գրողների գրվածքների թարգմանությունները։ Սիրիայում հրատարակվում է Մ. Գորկու ստեղծագործությունների լրիվ ժողովածուն։ 1947 թ. Բեյրութի ազգային գրադարանի աշխատակից Յուսուֆ Դագիրը արաբերեն լեզվով հրատարակեց ռուս գրականության բիբլիոգրաֆիա։ Բեյրութում լույս տեսավ նաև Սաղրետտին էլ Այնիի «Բուխարա» գիրքը։

Վերջին ժամանակներս զգալի աշխատանք է կատարված նաև Սովետական Միությունում արաբ գրողների գործերը հրատարակելու ուղղությամբ։ Ռուսերենի են թարգմանված և լույս են տեսել Լիբանանի գրող Ժորժ Հաննայի «Մեհյանի քրմապետները» և վիպասան Հաքիմ Թաուֆիկի «Ոգու վերադարձը» գրքերը, եգիպտական գրող Ահմեդ Քերումի «Արաբները պորտ-Սաիդի համար պայքարում» գիրքը, Իրաքի պրոգրեսիվ գրող Աբդ ալ Վահաբ Ալ-Բայաթիի ոտանավորները և այլ գործեր։

Վերջին տարիներս սովետական ռուս գրողների գրվածքների հետ միասին արաբական երկրները մուտք գործեցին նաև Սովետական Հայաստանի գրողների գրվածքները։

1940 թ. Հալեպում լույս է տեսնում մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի «Աբու Լալա Սահարի» պոեմի արաբերեն թարգմանությունը[7]։ Ինչպես նշում է թարգմանիչը, պոեմի արաբերեն թարգմանությունը խոշոր երևույթ է Արևելքի գրականության, հատկապես արաբական գրականության համար։ Գրքի առաջաբանում արաբ թարգմանիչ Խայր էտ տին էլ էսեստին տվել է Իսահակյանի կենսագրությունը, համառոտակի մեկնաբանելով պոեմը։ Հեղինակը իր մեկնաբանության մեջ ասում է. «Աբու Լալայի քարավանը ամենալավ, գեղեցիկ և հաղվագյուտ մի նկարագրություն է, որին երբեք չեն հասել արաբական գրականության մեջ... բանաստեղծը որպես նվեր հավիտենական դոկումենտ է ավելացնում Արևելքի գրականությանը, ինչպես նրանից առաջ ավելացրել են Խայյամն իր քառյակներով, Սաադին իր «Գյուլիստանով»։ Իսահակյանի «Աբու Լալան» մեծ հաջողություն է գտել արաբական գրական հասարակայնության շրջանում և ոգիոյով հաղորդվել է արաբական Արևելքի համար։ Արաբ ժողովուրդները սիրով են հետևում Սովետական Հայաստանի աշխատավորության հաջողություններին։ Ահա թե ինչ է գրում պրոգրեսիվ գրող Օմար Ֆախուրին.

[7] عروج ابي العلاء, حلب ١٩٤٠, թարգմանիչներ Բարսեղ Զաքոյան և Խայր Էտ տին էլ Էսեստի։

«Հայ ժողովուրդը թվով մեծ ժողովուրդ չէ և ոչ էլ Հայաստանը ընդարձակ երկիր՝ քարտեզի վրա։ Սակայն հայ ժողովուրդը դարերից ի վեր, իր արյունոտ պատմության ընթացքում, թվով իրենից ավելի մեծ ժողովուրդների դեմ պայքարելով, քայլել է դեպի ազատություն, անկախություն ու ապահովություն։ ...Արևշատություն եմ մաղթում Սովետական Հայաստանին։ Մեծ Հոկտեմբերի պարգևած բարիքները երբեք չեն խլվելու նրա ձեռքից։ Ինչ որ Մեծ Հոկտեմբերը դրոշմել է աշխարհի ճակատին, երբեք չի ջնջվելու»[8]։

[8] «Նոր ուղի», պարբերագիրք, 1946, 2 (6) Բեյրութ։